



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2020 թվականի N 1994

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ
ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 06
Ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 1995

ԱՃՈՒՐԴՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ավագանու 17 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 87 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Հայտարարել աճուրդ հետևյալ հողամասերը օտարելու մասին

ա) Անհատական բնակարանաշինության համար

1ա.1 Սանկտ Պետերբուրգի փողոց, թիվ 7/2-1 հողամաս 0,024հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0588-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1ա.2 Նաիրի փողոց, թիվ 10/2-1 հողամաս 0,02279հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0762-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1ա.3 Բուլղարական թաղամաս, թիվ 24/1-3/2 հողամաս 0,0284հա, կադաստրային ծածկագիր – 06-001-1025-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2500 դրամ:

1ա.4 Բաղրամյան պողոտա, թիվ 21/16 հողամաս 0,08հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0053-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:

1ա.5 Տաշիրի խճուղի, թիվ 12/2 հողամաս 0,04հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0010-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1ա.6 Տավրոս թաղամաս, 22-րդ փողոց, թիվ 5 հողամաս 0.04498հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0041-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 2000 դրամ:

բ) Հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման համար

1բ.1 Տիգրան Մեծի պողոտա, թիվ 63-1/63 հողամաս 0.00079հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0427-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 8000 դրամ:

1բ.2 Կ.Դեմիրճյան փողոց, թիվ 1-42/1 հողամաս 0,003հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0224-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1բ.3 Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 2/2-3/1 հողամաս 0.06հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0170-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3500 դրամ:

- 1բ.4 Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 2/3 հողամաս 0.0725հա, կադաստրային ծածկագիր – 06-001-2603-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:
- 1բ.5 Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 2/3-1 հողամաս 0,14408հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0229-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:
- 1բ.6 Զորյան փողոց, թիվ 89-3/6 հողամաս 0,00371հա կադաստրային ծածկագիր – 06-001-0437-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 5000 դրամ:
- 1բ.7 Գր. Լուսավորչի փողոց, թիվ 16/1-8/3 հողամաս 0,00578հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0330-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:
- 1բ.8 Մյասնիկյան փողոց, թիվ 3-1/2-2 հողամաս 0,004255հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0429-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 8000 դրամ:
- 1բ.9 Բաթումի փողոց, թիվ 14-4/8 հողամաս 0,005հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0340-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:
- 1բ.10 Համբարձումյան փողոց, թիվ 1-11/11 հողամաս 0,00431հա, կադաստրային ծածկագիր – 06-001-1020-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3500 դրամ:
- 1բ.11 Իսահակյան փողոց, թիվ 4-4/2 հողամաս 0,00596հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0744-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:
- 1բ.12 Շիրակի խճուղի թիվ 9-4 հողամաս 0.05հա, կադաստրային ծածկագիր – 06-001-3600-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:
- 1բ.13 Շիրակի խճուղի թիվ 9-5 հողամաս 0.06088հա, կադաստրային ծածկագիր – 06-001-3600-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:
- 1բ.14 Բաղրամյան պողոտա, թիվ 58/23-2 հողամաս 0.01778հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0040-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:
- 1բ.16 Տարոն-3 թաղամաս, Տաշիրի խճուղի թիվ 7/2 հողամաս 0,02հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0005-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3500 դրամ:
- 1բ.17 Տարոն-3 թաղամաս, Տաշիրի խճուղի թիվ 7/3 հողամաս 0,02հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0005-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3500 դրամ:
- 1բ.18 Տարոն-3 թաղամաս, Տաշիրի խճուղի, թիվ 7/4 հողամաս 0,049հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0006-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:
- 1բ.19 Տարոն-3 թաղամաս, Տաշիրի խճուղի, թիվ 7/5 հողամաս 0,03902հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0006-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 3000 դրամ:
- 1բ.20 Տարոն-4 թաղամաս, Բելառուսների թիվ 41/5-1 հողամաս 0.010հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0105-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:
- 1բ.21 Տարոն-4 Մալաթիայի փողոց, թիվ 2/6 հողամաս 0,0102հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0115-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:
- 1բ.22 Տարոն-4 թաղամաս, Զեյթունի փողոց, թիվ 5/1-2 հողամաս 0,0025հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0124-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:
- 1բ.23 Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 31/5-1 հողամաս 0,00288հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0109-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:
- 1բ.24 Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 31/6-1 հողամաս 0,0021հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0109-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:
- 1բ.25 Շինարարների փողոց, թիվ 13/4-7 հողամաս 0,00605հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0726-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4500 դրամ:
- 1բ.26 Նարեկացու փողոց, թիվ 20/5 հողամաս 0,01525հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0257-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

գ) Ավտոտնակների կառուցման համար

1գ.1 Խորենացու փողոց, թիվ 2/1-1/2 հողամաս 0,00198հա, կադաստրային ծածկագիր –06-001-0328-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 6000 դրամ:

1գ.2 Աղայան փողոց, թիվ 83-6/1 հողամաս 0,0042հա, կադաստրային ծածկագիր –06-001-0711-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.3 Տարոն-2, ՔՇՀ-4 թաղամաս, թիվ 46/8-1 հողամաս 0.00198հա, կադաստրային ծածկագիր –06-001-0035-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.4 Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 37/25-2 հողամաս 0,0028հա, կադաստրային ծածկագիր – 06-001-0108-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.5 Տարոն-4 թաղամաս, Մեքենաշինարարների թիվ 52/6-3/1 հողամաս 0.0056հա, կադաստրային ծածկագիր –06-001-0108-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

1գ.6 Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-7, թիվ 17-1/5 հողամաս 0,0021հա, կադաստրային ծածկագիր –06-001-0009-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

դ) Տնտեսական շինությունների կառուցման համար

1դ.1 Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4, թիվ 19/7-2 հողամաս 0,007877հա, կադաստրային ծածկագիր –06-001-0039-ից, 1քմ հողամասի մեկնարկային գինը սահմանված է 4000 դրամ:

2. Վանաձորի համայնքապետարանի աճուրդային և մրցութային հանձնաժողովին՝ սույն որոշման 1-ին կետում նշված աճուրդի անցկացման օրվանից մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմաններն ու պահանջները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՐԿՈՒ ԱՍԼԱՆՅԱՆ



2020թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 1996

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 10-1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՐԴԱՆՈՒՇ ԱՄԻՐԲԵԿԻ ՄԿՐՏՁՅԱՆԻՆ, ԹԱՄԱՐԱ ԱՄԻՐԲԵԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, ԺԵՆՅԱ ԱՄԻՐԲԵԿԻ ՄԿՐՏՁՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդանուշ Ամիրբեկի Մկրտչյանի, Թամարա Ամիրբեկի Վարդանյանի և Ժենյա Ամիրբեկի Մկրտչյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21012020-06-0079 վկայականը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ **որոշում եմ**.

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոց, թիվ 10-1/1 հասցեում գտնվող, Վարդանուշ Ամիրբեկի Մկրտչյանին, Թամարա Ամիրբեկի Վարդանյանին և Ժենյա Ամիրբեկի Մկրտչյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող բնակելի տունը և դրանով զբաղեցված հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Մոնթե Մելքոնյան փողոց թիվ 10-1/1 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 0.0086հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 11.37քմ մակերեսով շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Մոնթե Մելքոնյան փողոց, թիվ 10-1/1-1 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) 0.008595հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 10.09քմ մակերեսով շինության փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Մոնթե Մելքոնյան փողոց, թիվ 10-1/1-2 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2).


բ) 0.008595հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 10.09քմ մակերեսով շինության փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Մոնթե Մելքոնյան փողոց, թիվ 10-1/1-3 բնակելի տուն (հատակագիծ թիվ 3).

3. 48.9քմ մակերեսով հողամասը հանդիսանում է **ընդհանուր օգտագործման** հողամաս երեք տնատիրությունների միջև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻՎՈՐ ԱՄԼԱՆՅԱՆ



Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

09 նոյեմբերի 2020 թվականի N 1997

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ (ՆԱԽԿԻՆ ԺԴԱՆՈՎ ԹԱՂԱՄԱՍ) 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՀԱՐ ԱԼԵՔՍՈՒ ՂԱՐԱԲԵԿՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գոհար Ալեքսու Ղարաբեկյանի (ծնված՝ 06.02.1952թ.) դիմումը, 29.10.1990թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 30.06.2020թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1190 (նոտարական ակտի կոդ: 843-20200520-84-4557325) վկայագիրը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, մասնագիտական եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Բաղրամյան (Նախկին Ժդանով քաղամաս) 1-ին փողոց թիվ 43 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 259.3քմ օրինական հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերմիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1932-2006թ.թ.: Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Գոհար Ալեքսու Ղարաբեկյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Բաղրամյան (նախկին Ժդանով թաղամաս) 1-ին փողոց թիվ 43 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 259.3քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ.-ից հետո ինքնակամ կառուցված 7.89քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 6.03քմ) բնակելի տան 1-ին հարկի, 0.73քմ մակերեսով պարսպի և 8.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 6.16քմ) սանհանգույցի:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Հաստատել Վանաձոր քաղաքի Ժդանով թաղամաս Բաղրամյան 1-ին փողոց թիվ 43 հասցեի բնակելի տան փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Բաղրամյան պողոտա, 1-ին փողոց, թիվ 43 բնակելի տուն:

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
 ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
 info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 1998

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Տ. ՄԵԾԻ ՊՈՂ ԹԻՎ 77 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԳՈՒՐԳԵՆ ԳԱՌՆԻԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
 ԵՎ ԱՆԱԽՂԱ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
 ՊԱՏԿԱՆՈՂ ԽԱՆՈՒԹԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ,
 ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
 ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գուրգեն Գառնիկի Գևորգյանի և Անախղա Խաչատուրի Գրիգորյանի դիմումը, անշարժ
 գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1862265 վկայականը, ԱՐՍԵՆ
 ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը, շինությունների
 բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի
 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-
 րդ, 31-րդ կետերով և 32-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ
 հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պող թիվ 77 հասցեում գտնվող, Գուրգեն Գառնիկի Գևորգյանին
 և Անախղա Խաչատուրի Գրիգորյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող
 խանութը՝ համաձայն ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2
 հատակագծերի:
2. Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պող թիվ 77 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել
 փոստային հասցեներ.
 ա) 7.16քմ մակերեսով խանութի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 77-3/1 խանութ
 (հատակագիծ թիվ 1).
 բ) 2,27քմ մակերեսով խանութի փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, թիվ 77-
 3/2 խանութ (հատակագիծ թիվ 2):
3. Ճանաչել օրինական Գուրգեն Գառնիկի Գևորգյանին և Անախղա Խաչատուրի Գրիգորյանին ընդհանուր
 համատեղ սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող
 շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց
 քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ
 պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Տ. Մեծի պող թիվ 77 հասցեում գտնվող խանութում
 ինքնակամ իրականացված թվով 4 ձևափոխումները:
4. Սույն որոշման 3-րդ կետում նշված թվով 4 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար
 սահմանված վճարը՝ 10400 (տասը հազար չորս հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու
 դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 1999

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱԹՈՒՄԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 15-13/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՆԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՐՍԵՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աննա Սերյոժայի Մաթևոսյանի և Արեն Սերյոժայի Արսենյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10082020-06-0057 և Աննա Սերյոժայի Մաթևոսյանի, Արեն Սերյոժայի Արսենյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052020-06-0048 վկայականները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 8-րդ կետերով, ՀՀ կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերով՝ **որոշում եմ**.

1. Վանաձոր քաղաքի Բաթումի փողոց թիվ 15-13/3 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 4.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10082020-06-0057 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 18100 (տասնութ հազար հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Աննա Սերյոժայի Մաթևոսյանին և Արեն Սերյոժայի Արսենյանին՝ ավտոտնակի և բնակելի տան ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Աննա Սերյոժայի Մաթևոսյանի և Արեն Սերյոժայի Արսենյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 4.0քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2000

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 35/21Ա ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ
ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՓՈՏԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարինե Սամվելի Եսայանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.09.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-127/20 Ի եզրակացությունը, «Զուխտ Ախպուր» համատիրության կողմից 18.09.2020թ. տրված տեղեկանքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց, թիվ 35/21ա հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 72.52քմ արտաքին մակերեսով (ներքին՝ 59.16քմ) բնակելի տան և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 116.6քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված բնակելի տան և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին բնակելի տունը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց, թիվ 35/21ա հասցեում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 35/21-1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2001

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂ ԹԻՎ 7/49 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1930367 վկայականը, ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Ներսիսյան փող թիվ 7/49 հասցեում գտնվող, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 24.0քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23.01քմ) բնակելի գործառնական նշանակությամբ ավտոտնակը:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 24.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը օտարելու վերաբերյալ:
4. Վանաձոր քաղաքի Ներսիսյան փող թիվ 7/49 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Ք. Վանաձոր, Ներսիսյան փողոց, 1-ին փակուղի, թիվ 7-49/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻՆՈՒ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2002

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-4 ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ԹԻՎ 56-9/1 ԵՎ ՏԱՐՈՆ-4 ՍԵՔԱՍՏԻԱՅԻ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 56-9/2 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱԿՈՐ ՍԵՐՅՈՒԺԱՅԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՐՊԵՍ ՄԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հակոբ Սերյոժայի Խառատյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26122018-06-0047 և թիվ 26122018-06-0022 վկայականները, Վանաձոր համայնքի ղեկավարի 23 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 74 ավարտական ակտը (շահագործման թույլտվություն), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Միավորել Վանաձոր քաղաքի Տարոն-4 Սեքստիայի թիվ 56-9/1 և Տարոն-4 Սեքստիայի թաղամաս թիվ 56-9/2 հասցեներում գտնվող Հակոբ Սերյոժայի Խառատյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0042հա ընդհանուր մակերեսով հողամասերը և դրանց վրա գտնվող 39.43քմ մակերեսով ավտոտնակը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն-4 թաղամաս, Սեքստիայի թիվ 56-9/1-2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2003

ՎԱՆԱԾՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ, 1-ին շենքի ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՅԱՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՁԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 14.03.1997թ. թիվ 51 որոշումով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշմամբ և ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս, 1-ին շենքի արևմտյան մասում գտնվող 138.8քմ մակերեսով հողամասի և 138.8քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 129.8քմ) նախկին սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ հանդիսացող տարածքի (որը այժմ փաստացի չի գործում) նկատմամբ:
2. Փոխել Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս, 1-ին շենքի արևմտյան մասում գտնվող 138.8քմ արտաքին մակերեսով նախկին սոցիալ-կենցաղային նշանակության այլ շենքեր և շինություններ հանդիսացող տարածքի գործառնական նշանակությունը՝ որպես հասարակական նշանակության շինություն՝ հանդիսությունների սրահ:
3. Փոխել Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս, 1-ին շենքի արևմտյան մասում գտնվող 0.01388հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Ներսիսյան թաղամաս, թիվ 1/5-4 հանդիսությունների սրահ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2004

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2, ՔՇՀ-4, ԹԻՎ 51/2-1 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏԱՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Վարդգեսի Կարապետյանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով. **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4, թիվ 51/2-1 հասցեի ավտոտնակին կից ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 6.3քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 3.96քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 6.3քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Տարոն-2, ՔՇՀ-4, թիվ 51/2-1 հասցեի ավտոտնակին կից գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ Ք. Վանաձոր, Տարոն-2 թաղամաս, ՔՇՀ-4, թիվ 51/2-2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2005

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍՈՒԽՈՒՄԻ ՓՈՂ ԹԻՎ 14/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՌՈՄԻԿ ԱՇՈՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՎԱԼՅԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ԶԱՐԻԿ ՌՈՄԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՆԵԼԼԻ ՌՈՄԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱԿԵՐԵՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոմիկ Աշոտի Հովհաննիսյանի, Վալյա Արտավազդի Հովհաննիսյանի, Զարիկ Ռոմիկի Հովհաննիսյանի և Նելլի Ռոմիկի Հովհաննիսյանի դիմումը, անշարժ գույքի (օգտագործման) իրավունքի թիվ 1924900 վկայականը, ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագծերը, շինությունների բնութագրերը, 18.09.2020թ. տրված եզրակացությունները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ, 27-րդ, 31-րդ կետերով և 32-րդ կետի բ) ենթակետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշմամբ, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով և 32-րդ կետով **որոշում եմ.**

1. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Սուխումի փող թիվ 14/2 հասցեում գտնվող, Ռոմիկ Աշոտի Հովհաննիսյանին, Վալյա Արտավազդի Հովհաննիսյանին, Զարիկ Ռոմիկի Հովհաննիսյանին և Նելլի Ռոմիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Սուխումի փող թիվ 14/2 հասցեում գտնվող բնակարանում ինքնակամ իրականացված թվով 12 ձևափոխումները:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված թվով 12 ինքնակամ ձևափոխումների օրինականացման համար սահմանված վճարը՝ 20400 (քսան հազար չորս հարյուր) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Փոխել Վանաձոր քաղաքի Սուխումի փող թիվ 14/2 հասցեում գտնվող բնակարանի 61.57քմ մակերեսի գործառնական նշանակությունը՝ բնակելիից՝ որպես հասարակական գործառնական նշանակությամբ շինություն՝ առևտրի օբյեկտ:

Շինության համապատասխան մակերեսի գործառնական նշանակության փոփոխումը շինարարության կամ քանդման թույլտվություն չի պահանջում:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված գույքի համապատասխան մակերեսը հանել բնակարանային ֆոնդից:

5. Տարանջատել Վանաձոր քաղաքի Սուխումի փող թիվ 14/2 հասցեում գտնվող, Ռոմիկ Աշոտի Հովհաննիսյանին, Վալյա Արտավազդի Հովհաննիսյանին, Զարիկ Ռոմիկի Հովհաննիսյանին և Նելլի Ռոմիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակարանը՝ համաձայն ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱԶՅԱՆ ՌԴԲԵՐՏԻ ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

6. Վանաձոր քաղաքի Սուխումի փող թիվ 14/2 հասցեում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ.

ա) 79.70քմ մակերեսով բնակարանի (որից 53.11քմ առևտրի օբյեկտ) փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Սուխումի փողոց թիվ 14/2 բնակարան և առևտրի օբյեկտ (հատակագիծ թիվ 1).

բ) 22.85քմ մակերեսով բնակարանի (որից 8.46քմ առևտրի օբյեկտ) փոստային հասցեն՝ ք.Վանաձոր, Սուխումի փողոց թիվ 14/2-1 բնակարան և առևտրի օբյեկտ (հատակագիծ թիվ 2):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2006

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 102/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՌՈՔԵՐՏ ՍԱՄՍՈՆԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՏՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոբերտ Սամսոնի Սիմոնյանի դիմումը, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1987566 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով՝ որոշում եմ.

1. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 102/14 հասցեում գտնվող, Ռոբերտ Սամսոնի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի լրամշակված գլխավոր հատակագծի համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 31.1քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 140700 (հարյուր քառասուն հազար յոթ հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ռոբերտ Սամսոնի Սիմոնյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռոբերտ Սիմոնյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 31.1քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 102/14 հասցեում գտնվող ավտոտնակին տրամադրել նոր փոստային հասցե՝ Ք. Վանաձոր, Վարդանանց փողոց, թիվ 102/1-3 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2007

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 98-32/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԽՈՐԴԱՆՈՅԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՐԳԱՐԻՏ ՌԱԶՄԻԿԻ ՍՈԼՈՄՈՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարգարիտ Ռազմիկի Սոլոմոնյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 17092020-06-0055 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով և 35-րդ կետի գ) և ե) ենթակետերով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոց թիվ 98-32/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 37.1քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 33.95քմ) խորդանոցը 192920 (հարյուր իննսուներկու հազար ինը հարյուր քսան) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 37.1քմ մակերեսով հողամասը 167850 (հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Մարգարիտ Ռազմիկի Սոլոմոնյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Մարգարիտ Սոլոմոնյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել խորդանոցի և հողամասի առավաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 09
ք.Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2008

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԹԻՎ 57 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՀԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սվետլանա Վահանի Գրիգորյանի (ծնված՝ 07.09.1939թ.) դիմումը, 19.08.1986թ. տրված տեխնիկական անձնագիրը, 24.11.2009թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 5047 վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, 07.10.2020թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-146/ 20 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Մյասնիկյան թիվ 57 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 283.2քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1959-1990թթ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 283.2քմ, որը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու կից բնակելի տների սեփականատերերի՝ Սվետլանա Վահանի Գրիգորյանի և Ֆարֆուր Մուրադի Վարդանյանի միջև՝ հավասար բաժիններով, որից Սվետլանա Վահանի Գրիգորյանին պատկանող հողամասի բաժնեմասը կազմում է 141.6քմ (283.2:2):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Սվետլանա Վահանի Գրիգորյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Մյասնիկյան թիվ 57 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 141.6քմ (283.2:2) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ: 283.2քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականություն երկու կից բնակելի տների սեփականատերերի՝ Սվետլանա Վահանի Գրիգորյանի և Ֆարֆուր Մուրադի Վարդանյանի միջև՝ հավասար բաժիններով: Սվետլանա Վահանի Գրիգորյանին պատկանող հողամասի բաժնեմասը կազմում է 141.6քմ (283.2:2):

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վանաձոր քաղաքի Մյասնիկյան թիվ 57 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Մյասնիկյան փողոց, թիվ 57/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.ori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2009

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 13/1-33/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՌՈՄԱՆ ՎԱԼԵՐԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08 ՀՈՒՆԻՍԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 802 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռոման Վալերիկի Պետրոսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 11052020-06-0050 վկայականը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի գ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Թևոսյան փողոց թիվ 13/1-33/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 18.0քմ մակերեսով ավտոտնակը և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ 18.0քմ մակերեսով հողամասը վարձակալության իրավունքով, 10 տարի ժամկետով, տրամադրել Ռոման Վալերիկի Պետրոսյանին:
2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Ռոման Պետրոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի՝ 1.0քմ-ի համար ամսական 20 (քսան) ՀՀ դրամ վարձավճարով և հողամասի՝ 1.0քմ-ի համար ամսական 12 (տասներկու) ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության պայմանագիր:
3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 08 հունիսի 2010 թվականի «Ռոման Պետրոսյանի կողմից Թևոսյան փողոցի թիվ 13ա/33 հասցեում հողին ինքնակամ ամրակցված, Վանաձորի համայնքային սեփականություն հանդիսացող ավտոտնակը և հողամաս տրամադրելու մասին» թիվ 802 որոշումը՝ 14.06.2010թ. կնքված ավտոտնակի վարձակալության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 311 պայմանագիրը համարելով լուծված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2010

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7 ՇԵՆՔԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏԱՐԿՄԱՐ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմենուիի Ալբերտի Միխայլանի դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, ԳԱՄՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի թիվ 7 շենքի արևելյան մասում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 33.7քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 28.92քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 33.7քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կաղաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս.Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակի ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
5. Վանաձոր քաղաքի Շինարարների փողոցի թիվ 7 շենքի արևելյան մասում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Շինարարների փողոց, թիվ 7-6/1 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 նոյեմբերի 2020 թվականի N 2011

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
